Գերամեծար գերյարգելի Աբրայոր վերոյ և դարձուցեալ տեառն տեառն Յովհաննու վարդապետի, ողջոյն

... Իբր ի 20 փետրվարի, դեսպանն վենետիկու՝ արար հանդէս ի գիշերի յառաջին ժամու՝ հրացանօք և ֆշէնկօք ևն։ Արդ՝ իբրև սկսանին զհանդէսն, մերձակայ տաճիկքն չիսոթեալ, արտաքս զեղանին ի տանէն ֆենէռով, և տան միմեանց աւետիս թէ ծնաւ որդի թագաւորին։ Ցայնժամ և յապարանից թագաւորին՝ զան հասանին բարկութեամբ առ դեսպանն, թէ զի՞նչ է այդ զոր առնէք։ Ո՞չ ապաքէն նաւք մեր և թագաւորն իսկ դադարեալ կան ի հրացանից. և դուք զիա՞րդ համարձակեցայք առնել ընդդէմ ֆէրմանի թագաւորին, և կամէին տանել զգլխաւոր թարգմանն առ փաշան։ Բայց նոքա պատասխանեալ ասեն, թէ մոռացաք, և պարապ զտուանք։ Եւ նոքա հազիւ լռեալ, դառնան յետս։ Զայս պատմեաց ինձ իսլրահիմ պէռպէռն, որ ի Թօփղանան, որ և է դրացի դեսպանին Վենետիկու...։

Բազումք որոնեն զօրացոյց այսր տարւոյս մինչև ց5 կամ ց10 փրյ. բայց ոչ գտանեն։ Աճէմ ոմն պարսիկ՝ իմաստակ և կարդացօղ և տեղեակ զանազան լեզուաց, զկնի բազում խօսիցն և կապելոյ զբերանս տաճկացն, հարցանէ ցմի ոմն ի նոցանէ, թէ երբ է նէւրուզն (իբր թէ հասարակածն, յորում աւուր պարսիկք առնեն զմեծ հանդէս)։ Եւ նա հանեալ զիւր իւզլամէն, այսինքն օրացոյցն, ասէ, թէ՝ է յայս ինչ աւուր։ Իսկ նա ասէ. ամենեցուն իւր իւզլամէն սղալ է, բայց ի հայոցն, զոր երկու և երեք ամք են, յորմէհետէ չինեցին և նոքա. և նոցայն միայն ուղիղ է. և ոչ գիտեմ թէ կայ աստէն թէ ոչ։ Ցայնժամ պօղոս էնիշտէս, հանեալ զօրացոյցն մեր, ասէ. Ցայս ինչ աւուր և յայս ինչ ժամու է նէւրուզն։ Ասէ Աճէմն. ահա այդ է ուղիղ, ապա թէ ոչ՝ թէ ըռամազանն մեր, և թէ այլ ինչ, ամենայնն սղալ է։...

Իսկ վասն տօնանմայի քաղաքիս, այսչափ ինչ ունիմ գրել. զի ի մարտի 15, ի մէջ գիշերին ի 6 ժամուն, ծնաւ դուստր թագաւորին, որում յետոյ անուն եդին, հիյպէթ ուլլահ. որ թարգմանի, պարգև աստուծոյ։ Եւ ի ժամէ ծննդեանն մինչև ցայգն, վառեցին զբազմութիւն կանթեղաց և հարկանէին զտաւուլ զուռնայս՝ միայն ի վերնայարկս արքունի ապարանիցն։ Եւ ևս վառեցին զկանթեղս միայն ի փաշայ դափուսին։ Եւ յառաւօտու պահուն, այսինքն յառաւօտու ԵՇԹի, որ էր մարտի 4 և ըստ նորոցն մարտի 15. արձակիցին զթօփսն. և կարդաց քարոզ, թէ սկսեսցի տօնանման ի ցամաքի, և արասցեն եօթն տիւս և եօթն գիշերս, (յորս յետոյ յաւել թագաւորն և զերիս տիւս և զերիս գիշերս)։ Արդ սկսան մարդիկ զայնպիսի իրս առնել, մինչև մոռացուցանել զբարեկենդանն վենետիկու։ Եւ թէ զի՛նչ ինչ արարին, գրեցից համառօտիւ...։ Եւ մինչչև էր սկսեալ տօնանման, օր ըստ օրէ յաւելուին զայնքան իրս, մինչև զմի փոքրիկ մուկն վաճառէին հինգ փրյ։ Իսկ զմեծ մուկն 15 կամ 20 փրյ. և երբեմն 30 փրյ։ Եւ ոմն գեղացի ունելով ի ձեռին իւրում զմուկն, շրջեցուցանէր ի փողոցս ի վաճառել, և ասէր. ո՞հ թէ ո՞րքան պարարտ է։ Եւ վասն միոյ մկան զմիմեանս ձգէին ի դուռն դատաւորին։ Զի ի վաճառելն զմուկն, կատուն գնողին յափշտակեաց զմուկն և տարեալ խեղդեաց։... զմկունսն դնէին ի տօլապս, և սնուցանէին հացիւ. քանզի մկունքն շրջէին և պատէին զտօլապս, զորոց կախեալ կային ջրի խովաներ և կամ այլ ինչ։ Զխանութսն և զդրունս մեծամեծաց և զփողոցս զարդարեցին կանթեղօք, շամաթաթելիով, գեղեցկաչէն ֆէնէռովք և մեծագին իրօք և խեյալի ֆենեռօք և մեծագին դրօշակօք։ Իսկ յաւուրս տօնանմային օր ըստ օրէ յաւելուին զմասրախայս։ Քանզի ոմանք եղեն ստամպոլ էֆէնտիսի, ոմանք մուհտասիպ. թէվապիքն իւրաքանչիւրքն այլանդակեալ դիմօք։ Իսկ էֆէնտին, այլանդակ դիմօք և մորուօք նստեալ յէշ, և երբեմն ի ձի. նոյնպէս և մուհտասիպն։ Եւ շրջեալ ընդ փողոցս, կշռէին զհացս և կամ զայլ իրս խանութիցն. և իբր թէ այն պակաս է ի յարդար չափէն, (եթէ տիարքն իրաց ոչ տային նոցա փարայ) զնոցա ուսն ի ֆալախան եդեալ, ծեծէին։ Իսկ եթէ տային փարայ, մի ոմն բարձր ձայնիւ ասէր. ալլահթալէ պիգիմ փատիշահըմըզըն պիր կիւնիւ, պին էթսին։ Եւ թէվապիքն աղաղակէին.